«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ Կապանի թիվ13 ՆՈՒՀ

Դաստիարակ՝ Գոհար Առաքելյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Բովանդակություն

1. Ներածություն…….…… 3
2. Գլուխ1. Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը
3. Սաների զարգացման գործում……5
   1.1.Էքսկուրսիայի նշանակությունը……8
   1.2.Էքսկուրսիայի կազմակերպում ……10
   1.3.Էքսկուրսիայի ամփոփում……12
   1.4.Մշակույթային այցեր…….……13
4. Եզրակացություն.....……..17
5. Օգտագործվող գրականության ցանկ……18

Ներածություն

Երեխայի աշխարհաճանաչողությունն սկսվում է շրջակա միջավայրի ճանաչումից: Նախադպրոցականի ծանոթացումը կենդանի և անկենդան բնության, եղանակային փոփոխությունների, բնության երևույթների, օրգանիզմների փոխազդեցությանը և փոխադարձ կապերին պետք է սկսել դեռ կրտսեր տարիքից: Հարկավոր է նպաստել այն գիտակցության ձևավորմանն ու արմատավորմանը, որ երկիրը մեր ընդհանուր տունն է, իսկ մարդը՝ բնության մի մասնիկը: Այն պետք է պահպանել ու խնամել:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխաներին տրվող բնապահպանական գիտելիքների ծավալը նրանց հնարավորություն է ընդձեռնում ճանաչել, սիրել ու գնահատել շրջակա աշխարհը, հասկանալ բնության մեջ իրենց ճիշտ դրսևորելու անհրաժեշտությունը, պահպանել որոշակի բարոյական նորմեր և զգալ իրենց բնության մի մասնիկը:

Մանկապարտեզում իրականացվող բնապահպանական դաստիարակչական գործընթացը նպաստում է էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը: Դա էլ իր հերթին դառնում է մարդկային ընդհանուր կուլտուրային հաղորդակից դառնալու, նյութական և հոգևոր արժեքների պահպանմանը միտված շարժիչ ուժ: Բնապահպանական դաստիարակության իրականացումն ավելի արդյունավետ է, երբ այն զուգակցվում է էքսկուրսիաներով, մշակույթին այցելություններով: Նման մոտեցումն իր հերթին նպաստում է նաև երեխաների գեղագիտական դաստիարակությանը:

Էքսկուրսիաները, մշակույթային այցերը նպաստում են երեխայի շրջակա միջավայրում իր տեղի գիտակցմանը, նրա էկոլոգիապես գրագետ վարքագծի ունակությունների մշակմանը: Այդ նպատակով կարելի է կազմակերպել նաև պարապմունքներ, միջոցառումներ և զրույցներ հետևյալ թեմաների շուրջ.

- Մարդիկ և շրջակա միջավայրը,
- Ես և բնությունը,
- Ինչպե՞ս եմ օգտագործում բնության բարիքները,
- Ի՞նչ կլինի հետո, ոչնչացվեն շրջապատի կենդանիներն ու բույսերը,
- Ես ի՞նչ կարող եմ անել շրջակա միջավայրի բարելավման համար և այլն:

Երեխաներին հարկավոր է տեղեկացնել մարդկանց՝ էկոլոգիապես ոչ գրագետ գործողությունների հետևանքներին: Նրանք պետք է իմանան, թե ինչպես պահեն իրենց բնության գրկում:

Այսպիսով՝ էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նախակրթարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպման, սաներին աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալու, նրանց մեջ հետաքրքրություն առաջացնելու բնության, շրջապատող կենդանիների, բույսերի մասին:

Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Այն հնարավորություն կտա մատաղ սերնդի ներկայացուցիչներին մտահոգվելու և անհանգստանալու էկոլոգիական համամարդկային հիմնահարցերով, կբարձրացնի պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ:

Մարդը հանդիսանալով բնության մի մաս, հասարակության զարգացման տարբեր դարաշրջաններում, տարբեր բնույթի ազդեցություն է ունեցել շրջակա միջավայրի վրա: Պահպանելով բնությունը՝ մենք պաշտպանում ենք մեզ և մեր սերունդների շահերը: Ուստի դրանք իրականացնելու նպատակով ստեղծվել է բնապահպանական կրթության մի ամբողջ համակարգ: Առողջ և մաքուր միջավայր ունենալու խնդրով շահագրգռված են բոլորը, ուստի բնապահպանական խնդիրները վերաբերում են և՛ փոքրերին, և՛ երիտասարդներին, և՛ մեծերին: Այս շղթայում առաջին օղակը նախադպրոցահասակ երեխաների էկոլոգիական կրթությունն է:

Նախադպրոցական հաստատություններում էկոլոգիական կրթության ծրագրի խնդիրը երեխաների շրջակա միջավայրի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորումն է, բնության հետ շփման, բույսերի ու կենդանիների նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դրսևորումը:

Նախադպրոցականի էկոլոգիական կրթությունը հաջող ընթացք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ դաստիարակը քաջ գիտակցի դրա կարևորությունը, պատկերացնի նպատակներն ու խնդիրները, իրականացման ուղիներն ու միջոցները: Յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է գիտակցել, որ բնությունը երեխայի վրա ներազդելու հզոր միջոց և դաստիարակելու լավագույն մեթոդ է, քանզի մարդկության կարևորագույն հատկանիշները գիտելիքներ ձեռք բերելու ձգտումն է, իսկ ուսուցման պարագայում իմացության խթանը ճանաչողական հետաքրքրությունների բավարարման և մտահորիզոնի ընդլայնման պահանջն է:

Մարդուն շրջապատող բնությունն ու կենդանական աշխարհը ոչ միայն անսահման գիտելիքներ ոն պարունակում իրենց մեջ, այլև անչափ հետաքրքիր են, գրավիչ, սիրելի և օգտակար: Բնության միջոցով կամ բնության գրկում դաստիարակել երեխային, նշանակում է ձևավորել որոշակի գիտելիքներ, վերաբերմունք, մտածողություն, աշխարհաճանաչում, աշխատասիրություն, գեղարվեստական ունակություններ: Այս առումով բացառիկ է էքսկուրսիաների, զբոսանքների, զրույցների, անցկացվող դիտումների, մշակութային այցելությունների դերը, որոնց շնորհիվ սանը անմիջականորեն առնչվում է բնությանը, ձեռք բերում որոշակի գիտելիքներ երկրի պատմության ու մշակույթի մասին: Նրանք բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ և աշխույժություն են ցուցաբերում իրենց շրջապատող աշխարհի մասին տեղեկություններ ստանալիս, իսկ դիտումների ընթացքում հնարավորություն են ունենում ծանոթանալ, ճանաչել, տեսնել առարկան, երևույթը:

Էքսկուրսիաները հնարավորություն են տալիս վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ բնության բազմապիսի առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, փոխկապակցվածությունը և մարդու ազդեցությունը բնության վրա: Այս ամենը նպաստում են երեխաների աշխարհաճանաչողական դիտողունակության զարգացմանը, և նրանց մեջ հետաքրքրություն և սեր են առաջացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք դաստիարակում շրջապատի և հայրենի բնության նկատմամբ:

Էքսկուրսիայի նշանակությունը

Արդի կրթադաստիարակչական աշխարհը միտված է նախադպրոցական երեխաների անհատական հատկանիշների բարելավմանը: Այդ իսկ պատճառով, բազմակողմանի զարգացած և լիարժեք անհատ ձևավորելու համար նախադպրոցական ուսումնական հաստատություններից պահանջվում է նոր մոտեցումների, կրթական նոր ուսուցման մեթոդների կիրառության: Դրանք պետք է ապահովեն այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են երեխաներին հետագա կյանքում: Նախադպրոցականի կրթադաստիարակչական գործընթացում կարևոր դեր ունի հայրենասիրության գիտակցումը: Հայրենասիրությունը դա սերն է հայրենիքի հանդեպ, որն իր մեջ ընդգրկում է շրջապատը, բնությունը, հասարակական կյանքը, ինչպես նաև ազգային սովորույթներն ու լեզուն: Անհրաժեշտ է երեխային դաստիարակել այնպես, որ նա իրեն զգա որպես հասարակության մի մասնիկը, սեր ու հարգանք տածի դեպի մայր լեզուն, պատմությունը, մշակույթը:

Հայրենասիրության դաստիարակումը նախադպրոցականի մոտ ձևավորում է մի այնպիսի կրթական համակարգ, որի միջոցով նրանք իմանում են երկրի, մարզի, քաղաքի(գյուղի) անունը, մշակույթը, սովորությունները և հպարտությամբ լցվում հայրենիքի հանդեպ:

Հայ մեծ մանկավարժ Աբովյանն է նկատել. Բնությունն իր բազմապիսի առարկաներով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառա-հետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է, որ ամենից հեշտ ու դյուրին ձևով, խոր ու կայուն կերպով է սովորեցնում մարդկանց՝ բնությունը ճանաչել: Այդ հրաշալի դպրոցը, ուսուցման համար իր ընձեռնած բազմապիսի հնարավորություններով ու հեշտ ձևերով, ճիշտ ու լավ օգտագործելու համար, հաճախակի պետք է լինել այնտեղ՝բնության գրկում.նրանից, նրա մեջ ու նրա միջնորդությամբ սովորելու համար: Ահա թե ինչու է կարևոր էքսկուրսիաների կազմակերպումը:

Էքսկուրսիաներն ընդլայնում են երեխաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում նոր տպավորություններով: Բացի դրանից էքսկուրսիայի ժամանակ բոլոր առարկաներն ու երևույթները դիտվում և ուսումնասիրվում են բնության մեջ, իրենց բնորոշ պայմաններում, այլ առարկաների ու երևույթների հետ փոխկապակցվածության մեջ, ինչն էլ ճանաչողական, դաստիարակչական նշանակություն է ունենում երեխայի, որպես մարդ-քաղաքացու ձևավորման գործում:

Այդպիսի զբոսանք-էքսկուրսիաների ընթացքում երեխաները պատկերացում են կազմում երկրի մասին, ծանոթանում նրա մշակույթին, աշխատանքային և հոգևոր սովորույթներին: Այդ գործընթացում ճանաչողությունը փոխարինում է տեսական-առարկայական ակտիվ փուլի, որի ընթացքում երեխան և՛ տեսնում, և՛ լսում, և՛ ճանաչում է շրջակա աշխարհը:

Էքսկուրսիաները երեխաների մեջ կենդանի հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատն ու հայրենի բնությունը, այդ շրջապատում եղած բույսերի, կենդանիների ու մարդկանց աշխատանքի նկատմամբ:

Էքսկուրսիան երեխաների հետ կազմակերպվող կրթադաստիարակչական աշխատանք է, որի ժամանակ զարգանում է ոչ միայն տարածական մտածողությունը, տրամաբանությունը, կողմնորոշումը, այլև կապակցված խոսքն է զարգանում: Էքսկուրսիայի տարբեր պահերի հաջորդականությունն ու կապը, սովորած նոր գիտելիքները և դրանցից արված եզրակացությունները նպաստում են գիտելիքների պաշարի հարստացման և խոսքի կուլտուրայի զարգացմանը:

Բացառիկ կարևոր նշանակություն ունեն էքսկուրսիաները երեխաների դաստիարակության, ուշադրության, դիտողականության զարգացման մեջ: Ձևավորում են կարգապահություն, կազմակերպվածություն, անվտանգ վարքագծի դրսևորում, ինչը նպաստում է կոլեկտիվ փոխհարաբերությունների ստեղծմանը :



Բացի դրանից էքսկուրսիա գնալիս երեխաները երկար ժամանակ լինում ոն բնության մեջ, թարմ օդում, խաղում, զվարճանում են, ինչը նպաստում է նրանց առողջության ամրապնդմանը, բարելավում է շարժողական ակտիվությունը, բարձրացնում աշխատունակությունը, որը կարևոր է զարգացման, կրթության ու դաստիարակության համար: Նրանք գրեթե ողջ շաբաթվա ընթացքում լինում են աշխույժ, առույգ, ակտիվ և կենսունակ, ինչն էլ դրական ազդեցություն է ունենում ուսումնադաստիարակչական պրոցեսի վրա:

Էքսկուրսիայի կազմակերպում

Էքսկուրսիայի ճիշտ անցկացումը պահանջում է էքսկուրսիայի նպատակի ու բովանդակության հստակ պատկերացում, աշխատանքի ճիշտ պլանավորում, կազմակերպում և ստացված արդյունքի ամփոփում: Էքսկուրսիաների կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեք հիմնական քայլերի վրա՝նախապատրաստում, անցկացում, ամփոփում:

Էքսկուրսիայի նպատակը պետք է բխի նախադպրոցականների խնդիրներից, պահանջներից, տարիքային առանձնահատկություններից: Նպատակը որոշելուց դաստիարակը պետք է մանրամասն ուսումնասիրի և տեղեկացված լինի տվյալ թեմայի մասին, որպեսզի կարողանա երեխաներին բավարար չափով տեղեկություններ հաղորդել:

Այդ պատճառով պետք է միջոցառումն կազմակերպելիս՝

- Նշել էքսկուրսիայի թեման,
- Նպատակը,
- Այն անցկացնելու հնարներն ու ձևերը,
- Ընտրել տարվա եղանակին, երեխաների ֆիզիկական հնարավորություններին համապատասխան վայր,
- Երեխաների հետ անցկացնել նախնական զրույց՝հետաքրքրություն առաջացնելու նպատակով,
- Հիշեցնել անվտանգության կանոնների մասին:

Էքսկուրսիան սկսվում է նրանով, որ դաստիարակը երեխաներին հիշեցնում և կրկին բացատրում է էքսկուրսիայի նպատակը, անելիքներն ու պարտավորությունները:
Դաստիարակը հենց էքսկուրսիայի սկզբից պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի տվյալ վայրի, առարկայի, երևույթի հանդեպ, որպեսզի երեխաները մեծ ուշադրությամբ և լարվածությամբ լսեն և դիտեն այն: Այդ իսկ պատճառով դաստիարակը պետք է այնպիսի հարցեր առաջադրի, որոնց պատասխանը գտնելու համար երեխաները հակադրված լինեն ամբողջ էքսկուրսիայի ընթացքում ուշադրությամբ դիտել ուսումնասիրվող օբյեկտները:
Էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն դիտվում են առարկաներն ու երևույթները, այլև բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում՝գույզգույն տերևներ, կաղին, հատապտուղներ, չորացած ծառի ճյուղեր, կոներ և այլն:
Էքսկուրսիաներից հետո պետք է կազմակերպել ամրապնդող պարապմունքներ՝ստացված ինֆորմացիան ավելի լավ յուրացնելու համար: Ավելի նպատակահարմար է զրույցը, ապլիկացիան, ծեփը, նկարչությունը՝էքսկուրսիայի թեմային համապատասխան:

Վերը նշվածների դրական կողմերից ելնելով անհրաժեշտ է թեմատիկ էքսկուրսիաներ կազմակերպել կրթադաստիարակչական և հայրենասիրական թեմաներով:

Այսպիսի նախագծերի համար անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ նախադրյալներով.

- Հասանելիություն,
- Համակարգված և հետևողական թեմատիկ պլանավորում,
- Ներգրավվածություն,
- Էքսկուրսիայի կազմակերպման համատեղ մոտեցում:

Հասանելիությունը երեխաների կողմից ստացված ինֆորմացիան է՝ իրենց տարիքի և զարգացմանը համապատասխան: Ինֆորմացիան պետք է տրվի ոչ միայն խոսքային, այլ նաև տեսողական, հուզական և կիրառվի խոսքային հնարներ:

Համակարգված և հետևողական թեմատիկ պլանավորումը տվյալ նպատակի իրագործումն է: Այն ենթադրում է ոչ միայն էքսկուրսիայի իրականացում այլև փոխկապակցված միջոցառումների իրագործում՝ մեկ թեմայի շուրջ:

Այսպիսի ինտեգրված էքսկուրսիաները նպաստում են ծնողների հետ համագործակցությանը, երեխաների ծանոթացմանը թանգարաններին, գրադարաններին, կրթական օջախներին:

Համակարգվածության մյուս առանձնահատկությունն այն է, որ էքսկուրսիայի ժամանակ ընդլայնվում է երեխաների աշխարհայացքը, նրանց ակտիվ, կապակցված խոսքը, հարստանում է բառապաշարը, մեծանում է պատասխանատվության զգացումը, աշխատունակությունը, զարգանում է ֆիզիկական ունակությունները, փոխօգնության զգացողությունը, գեղեցիկը տեսնելու կարողությունը:

Էքսկուրսիայի ամփոփում

Էքսկուրսիայի հիմնական մասերից է ամփոփումը, որը կարող է տեղի ունենալ ինչպես էքսկուրսիայի վայրում, այնպես էլ մանկապարտեզում:

Կրկին կարելի է առաջադրել հարցեր.

- Ի՞նչ նպատակով էր կազմակերպվել,

- Ի՞նչ պետք է անեին երեխաները,
- Ի՞նչ առարկաներ և երևույթներ ուսումնասիրեցին,
- Ի՞նչ սովորեցին:

Այս ամփոփման ժամանակ կարևոր տեղ պետք է տալ կարգապահական հարցերին, որը ինչպես այդ էքսկուրսիայի, այնպես էլ հետագա էքսկուրսիաների կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի:

Էքսկուրսիայի ամփոփման աշխատանքների մեջ մտնում է նաև հավաքած նյութերի մշակումը: Հավաքված նյութերի մի մասը կարող է կապված լինել էքսկուրսիայի բուն թեմայի հետ, իսկ մյուս մասը կարող են պահել հետագա ուսումնասիրությունների համար:

Դրանք անհրաժեշտ է դասավորել արկղերում, թղթապանակներում հետագայում օգտագործելու նպատակով:

Այդ նյութերի մշակմանը պետք է մասնակից դարձնել որքան հնարավոր է շատ երեխաների, որովհետև այն նպաստում է ինչպես աշխատանքային դաստիարակության, այնպես էլ երեխաների բնավորության մեջ դրական գծեր՝ պարտաճանաչություն, ճշմարտապահություն ու բարեխղճության արմատավորում:

Էքսկուրսիաներից հետո նպատակահարմար է նաև կազմակերպել ամրապնդող պարապմունքներ՝ ստացված ինֆորմացիան ավելի լավ յուրացնելու համար(կերպարվեստային):

Մշակույթային այցեր

Էքսկուրսիաներից ոչ պակաս կարևոր են նաև մշակույթային այցերը թանգարաններ, հուշարձաններ, գրադարաններ, երաժշտական դպրոցներ, որոնք ընդլայնում են սաների մտահորիզոնը, սովորեցնում հասկանալ և գնահատել արվեստը, ինչպես նաև ճանաչել հայրենի երկրի պատմությունը, մշակույթը:

Թանգարանները, գրադարանները կամ գեղարվեստի դպրոցները մշակույթային արժեքների պահպանման անցյալի հիշողությունը, օգտակար տեղեկությունները սերնդեսերունդ փոխանցելու միջոց են, իսկ մենք մեծերս պարտավոր ենք պահպանել և փոխանցել գիտելիքներն ու մշակույթային արժեքները մեր սաներին:

Ինչպես էքսկուրսիաները, այնպես էլ մշակույթային այցերն ունեն առանձնահատկություններ, որոնց նպատակն է.

- Հայրենասիրական դաստիարակություն,
- Մտահորիզոնի զարգացում,
- Ժողովրդի, մշակույթի և սովորույթների նկատմամբ հարգանք սերմանելը:

Մշակույթային և պատմական էքսկուրսիան նպաստում է հիմնական անհատական ուսումնական գործողությունների ձևավորմանը.

- Երեխան զարգացնում և պահպանում է սովորելու դրական մոտիվացիա և ճանաչողական հետաքրքրություն,
- Երեխան ձգտում և սովորում է նոր բաներ փնտրել իրեն շրջապատող աշխարհում,
- Ուսումնասիրելով իր ժողովրդի մշակույթը, երեխան սկսում է իրեն ճանաչել, որպես հասարակության քաղաքացի իր արժեքներով և ավանդույթներով, միաժամանակ հպարտանալով իր մշակույթի մեծությամբ և բազմազանությամբ:
- Շփվելով մշակույթային և բնական առարկաների հետ երեխան գիտակցում է իր պատասխանատվությունը դրանց մասին հոգալու և դրանց պահպանման համար, ինչը զարգացնում է նրա էթիկական զգացմունքները և ձևավորում էկոլոգիական մշակույթ,

- Էքսկուրսիայի ընթացքում երեխայի մոտ ձևավորվում է գեղագիտական ճաշակ:

Այցը թանգարաններ նպաստում են նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրության և համահունչ խոսքի զարգացմանը: Էքսկուրսիաները դեպի թանգարաններ օգնում են նորովի ընկալել աշխարհը: Թանգարանային ցուցանմուշների հետ ծանոթանալն օգնում է երեխաներիինծանոթանալ անցյալին, այստեղ նրանք ստանում են հայրենասիրական դաստիարակություն, որի էությունը երեխայի հոգու մեջ սեր սերմանելն է

դեպի հայրենի բնությունը, տունը ու ընտանիքը, դեպի երկրի պատմությունն ու մշակույթը:

Մեր մանկապարտեզը գտնվում է Սյունիքի սրտում՝ չքնաղ Կապանում: Կարելի է ասել, որ մենք՝ Սյունեցիներս ապրում ենք թանգարան-քաղաքում, հուշարձան-քաղաքում, մշակույթային մի քաղաքում, ինչը դրական է անրադառնում երեխաների կրթադաստիարակչական աշխատանքներին, նպաստում նրանց հայրենասիրության զգացումի ձևավորմանը:

Ծնողների ակտիվ մասնակցությամբ իրականացնում ենք շրջայցեր ապահովելով ծնող-մանկապարտեզ փոխադարձ կապը:

Էքսկուրսիա ենք կազմակերպել դեպի Վահանավանքի և Հալիձորի վանական համալիր, հուշահամալիրներ, էլեկտրոնային գրադարան, երկրագիտական և պատմամշակութային թանգարաններ, նկարիչների արվեստանոցներ:

Դեպի Վահանավանքի վանական համալիր կատարած էքսկուրսիայի արդյունքում երեխաները ծանոթացան հարազատ քաղաքի տարածքում գտնվող վանական համալիրի շինությանը, ստացան Տեր Խաչատուրի օրհնանքը, ինչի արդյունքում բարձրացավ նրանց հայերանասիրական ոգին: Հօգուտ մայր բնության՝ մաքրեցինք համալիրի տարածքը կենցաղային աղբից, չորացած ճյուղերից:

Մաքուր օդում լինելը նպաստեց երեխաների ֆիզիկական ակտիվությանը: Կազմակերպված մրցակցային խաղերի արդյունքում մեծացավ կոլեկտիվ գործելու զգացումը, նոր մարդկանց հետ շփումը:

Այսպիսով էքսկուրսիաները շրջակա աշխարհը ճանաչելու, սիրելու, պահպանելու խթան են հանդիսանում նախադպրոցական տարիքի երեխաների համար:

Ցանկացած այցից առաջ տեղեկացնում ենք այցի նպատակի մասին, երեխաներին փոխանցում իրենց տարիքին հասանելի, ընկալելի տեղեկություններ:

Իրականացնում ենք զրույցներ էքսկուրսիայից առաջ, թե ինչպես պետք է՝դրսևորեն իրենց պարտեզի սահմաններից դուրս, նկարների, տեսասահիկների միջոցով ծանոթացնում ենք մեր երթուղուն: Դեպի մեր նպատակադրված վայր, ճանապարհին երեխաները ստանում են հանձնարարություններ, և տեղում իրականացնում հանձնարարությունները.հավաքում են տերևներ, կոներ՝մեծ և փոքր, փոքրիկ չորացած ճյուղեր՝ինքնաշեն առարկաներ պատրաստելու համար:

Շնորհիվ մեր բանիմաց և հմուտ էքսկուրսավարների, ովքեր երեխաներին հասանելի բառերով և տերմիններով ներկայացնում են թանգարանային ցուցանմուշները, կտավները, հնագիտական իրերը, բոլոր միջոցառումներն անցնում են հետաքրքիր և բովանդակալից, ինչի ապացույցը էքսկուրսիաների ժամանակ արված լուսանկարներից մեզ ժպտացող աչուկներն են:

Եզրակացություն

Այսպիսով՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում էքսկուրսիաները և մշակույթային այցերը մանկավարժական գործընթացի կարևոր մասն են: Դրանք այցելություն են դեպի բնության գիրկ, տեսարժան վայրեր, գրադարաններ, թանգարաններ և այլն: Ուսումնադաստիարակչական նպատակներով այցերը լինում են առավել տպավորիչ, հուզական, մնայուն, որովհետև փոխանցումն իրականացվում է անմիջական շփման և հաղորդակցման միջոցով:

Գործունեության այս ձևերի ժամանակ մեծ բավականություն են ստանում թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Սաների համար նա ոչ միայն հետաքրքիր ժամանակ է, այլ նաև ուսումնադաստիարակչական գործունեություն, որը զարգացնում է մտածողությունը, ձևավորում է հուզական ոլորտը, դաստիարակում վարքի դրսևորման ձևեր, ինչպես նաև մարզվում է ֆիզիկական տոկունությունը: Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում է էսթետիկ զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակում են հարգանք ուրիշի աշխատանքի նկատմամբ, հայրենիքի նկատմամբ, բնությունը գնահատելու և պաշտպանելու ցանկություն, ընդլայնում են սաների մտահորիզոնը, ձևավորում աշխարհայացքը, նպաստում՝ խոսքի զարգացմանը, այն սաների մոտ ձևավորում է այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, համագործակցությունը, փոխադարձ աջակցությունը, խնդրահարույց իրավիճակներում ինքնուրույն մտածողությունը, կողմնորոշումը, միջանձնային հարաբերությունների ձևավորունը, կոնֆլիկտների հաղթահարման որոշակի հմտություններ:

Օգտագործվող գրականության ցանկ

1. Աշոտ Տեր-Գրիգորյան «Գործնական աշխատանքները բացատրական ընթերցանության դասերին» ՀԱՅՊԵՏ ՈՒՍՈՒՄՆԱՀՐԱՏ, Երևան 1963թ.
2. Կարինե Մարտիրոսյան «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում» Երևան 20007թ.
3. https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-31/024b26afd7869a9b07e13be6fdf43de3.docx
4. https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-28/84bead9f00555ecacb90bd8c9531e9ec.docx